ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 821-Ա « 13 » փետրվարի 2026 թ.

Գ. ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.177/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ռուբեն Հովհաննիսյանի դիմումը՝ Գ. Բաշինջաղյան փողոցի հ.177/3 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող շինության /հարթակի/ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.01092023-01-0339 վկայական) 24.5քմ մակերեսով հողամասի համար կնքված 06.02.2008թ. հ.437 վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով.

1. Լիազորել Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Ռուբեն Հովհաննիսյանի հետ կնքել համաձայնագիր՝ Գ. Հասրաթյան փողոցի հ.177/3 հասցեում գտնվող հարթակի զբաղեցրած 24.5քմ մակերեսով հողամասի համար, 2008 թվականի փետրվարի 6-ին կնքված վարձակալության հ.437 պայմանագիրը լուծելու մասին՝ կատարելով համապատասխան փոփոխություն գույքի վարձակալության բազայում:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրի իրավունքի դադարումը ենթակա է պատական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ